

5.9. Ստանդարտացումը, սերտիֆիկացումը և հավատարմագրումը 2008թ. հունվար-հունիսին

Ըստ ՀՀ էկոնոմիկայի նախարարության ամփոփ տեղեկատվության, 2008թ. հունվար-հունիսին ստանդարտացման, սերտիֆիկացման, հավատարմագրման և նորմատիվ փաստաթղթերի պարտադիր պահանջների պահպանման պետական վերահսկողության ոլորտներում իրականացված գործունեությունը բնութագրվել է հետևյալ ցուցանիշներով.

Ստանդարտացում: Ընդունվել և պետական գրանցում է ստացել ազգային 10 ստանդարտ: ՀՀ տարածքում գործադրվել են 6 միջազգային և 4 ՀՀ ստանդարտներ: Պետական գրանցում է ստացել արտադրանքի վերաբերյալ ՀՀ տեխնիկական 211 պայման: Թողարկվել է 6 անուն տեղեկատվական նյութ:

Սերտիֆիկացում: Տրվել է համապատասխանության 6028 սերտիֆիկատ, որից 5749-ը՝ ներմուծվող, 39-ը՝ արտահանվող արտադրանքի համար, մնացած 240-ը տրվել է ՀՀ-ում արտադրվող սերիական արտադրանքի համար: Մերժվել է արտադրանքի սերտիֆիկացման 8 հայտ, բոլորն էլ արտադրանքի անհամապատասխանության պատճառով:

Հավատարմագրում: ՀՀ տարածքում հավատարմագրվել է սերտիֆիկացման 1 մարմին և 5 լաբորատորիա:

Ստանդարտացման, սերտիֆիկացման, հավատարմագրման գործունեության համեմատական ցուցանիշները, 2008թ. հունվար-հունիսին

(հավելածր /նվազումը «-» նշանով/)

	Ընդամենը, միավոր	Հունվար-հունիսի համեմատ, %		
		2005թ.	2006թ.	2007թ.
Ընդունված և պետական գրանցում ստացած ազգային ստանդարտների քանակը	10	- 95.8	- 86.8	- 93.4
Պետական գրանցում ստացած տեխնիկական պայմանների քանակը	211	27.1	- 9.4	- 11.3
Թողարկված տեղեկատվական նյութերի քանակը	6	2.0 անգամ	20.0	- 14.3
Տրված համապատասխանության սերտիֆիկատների քանակը	6028	55.7	29.3	28.3
որից՝				
ներմուծվող արտադրանքի համար	5749	66.2	55.9	32.6
արտահանվող արտադրանքի համար	39	- 68.8	- 2.5	- 23.5
Արտադրանքի սերտիֆիկացման մերժված հայտերի քանակը	8	33.3	- 11.1	14.3
ՀՀ տարածքում հավատարմագրված լաբորատորիաների քանակը	5	25.0	- 64.3	- 44.4

Անորակության պատճառով չսերտիֆիկացված արտադրանք: 2008թ. հունվար-հունիսին անորակության պատճառով չեն սերտիֆիկացվել ներմուծված և ՀՀ-ում արտադրված արտադրանքի որոշ տեսակներ:

Անորակության պատճառով չսերտիֆիկացված արտադրանքի բաշխվածությունը ըստ երկրների, 2008թ. հունվար-հունիս

Երկիրը	Արտադրանքի անվանումը	Քանակը
Հայաստանի Հանրապետություն	խավիար սպիտակուցային հատիկավոր նմանակած	56.5 կգ
	մրգային օտի	սերիական արտադրություն
	ըմպելիք սառը սուրճ	սերիական արտադրություն
Իսպանիա	բանող հակասառիչ	324 կգ
Գերմանիա	ուլաթ-սպիրիթ	33.2 կգ
Իրանի Իսլամական Հանրապետություն	կերոսին տեխնիկական	28270 կգ
Չինաստան, Եվրամիություն	խաղալիքներ	787 կգ